

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՆՈՐ ԲԱՌԻ ԵՎ ՆՈՐ ԻՄԱՍՏԻ
ԸՄԲՈՆՈՒՄԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Փ. Գ. ՄԵՅԹԻՆԱՅԱՆ

Նորաբանությունների, նոր իմաստների, նոր բառերի մասին՝ իբրև լեզվաբանական միավորների, Մ. Աբեղյանը որևէ առանձին հոդված կամ ուսումնասիրություն չունի, սակայն նրա «Հայոց լեզվի տեսության» «Լեզվի փոփոխությունը» գլխում¹ տրվում են արդեն այս բոլոր հասկացությունների տեսական պատկերացումներն ու առաջացման ուղիները:

Մանրամասն խոսելով անհատական լեզվի, դրա փոփոխության մասին, հեղինակը հանդում է այն մտքին, որ անհատը, «իր սովորած լեզվական իրականությունները» վերարտադրելիս, «անալոգիական կազմությամբ արտադրում է այնպիսի բառեր, բառերի այնպիսի նշանակություններ ու բառաձևեր, կամ կապակցության ձևեր»², որոնք երբեք գոյություն չեն ունեցել լեզվի մեջ: Եվ ըստ այդ Մ. Աբեղյանը բերում է «պատահա», «վաքս», «մազուխ» բառերը, որոնք «թղթել, յուղել, ձիթել» և նման բառերի նմանակությամբ լեզվում «խոնարհվում են» հնարավոր բոլոր ձևերով՝ «պատատոնել, մազութել, վաքսել»՝ հանդես գալով իբրև նոր կազմություններ: Լինում է և այնպես, որ «նոր կազմությունն ընդհանրանում է՝ պահելով հին ձևի նշանակության մի կողմը միայն»³: Որպես ապացույց նա բերում է «ունիմկալայ» բառի օրինակը, որը նշանակում է ունենալ, բռնել, տիրել և հետևեցնում է, որ այս բայի համար «անալոգիական նոր կազմությամբ» առաջ է եկել «ունեցա» ձևը, որը գործածվում է «ունենալ նշանակությամբ», իսկ հին իմաստները գործածական են մնում միմիայն բարբառներում: Աբեղյանը առաջ է քաշում այն միտքը, որ հին ու նոր կազմությունների միջև շարունակ գնում է պայթար, անցնում է մի որոշակի շրջան, մինչև նորի վերջնական հաղթանակ, մինչև նորի հետզհետե տարածում և ընդլայնում:

Մ. Աբեղյանը բավականին հանգամանորեն ներկայացնում է նաև բառերի նշանակությունների փոփոխությունները, որոնք և բառերի նորիմաստ գործածությունների հիմք են դառնում:

Այս դեպքում, սակայն, Աբեղյանը թերևս միակողմանիորեն է մոտենում հարցին, քանի որ բառերի նոր իմաստների առաջացումը կապում է սոսկ անհատի անհրաժեշտ բառապաշարով օժտված չլինելու փաստի հետ: Այս դեպքում Մանուկ Աբեղյանը չի խոսում նոր իմաստների առաջացման այն ուղիների մասին, որոնք ուղղակիորեն կապվում են այլ երևույթների, իրերի, գործողության համընկման, նմանակության, զուգորդության հետ: Ահա թե ինչպես է մեկնաբանում նա բառերի նոր իմաստների առաջացումը. «Այդ նրանից է առաջանում, որ ամեն մարդ ավելի շատ պատկերացումներ ունի, քան բառեր գիտե, կամ մարդը չի կարողանում խոսելիս հիշել իր իմացած բառերը... Այդպիսի դեպքերում խոսողն իր պատկերացումները հաղորդում է ուրիշներին իր իմացած, կամ նույն ընդհանուր իր հիշած ըստ կարելիության հարմար բառով, որ արտահայտում է իր զաղափարի բովանդակության մի մասը, աչքի ընկնող մի հատկանիշը, էական կողմը, կամ թե իր արտահայտելի զաղափարի հետ որևէ մոտիկ առնչություն ունի: Այդպիսով բառը գործածվում է ոչ թե իր սովորական նշանակությամբ, այլ մի

1 Մ. Աբեղյան, Երկեր. հ. 2., Երևան, 1974:

2 Նույն տեղում, էջ 40:

3 Նույն տեղում, էջ 41:

նորիմաստ պատահական նշանակությամբ: Այս տեսակետից նայելով հար-
սին, Արեղյանը հանդում է այն եզրակացությանը, որ «բառերի նոր նշա-
նակությունները սկսվում են հաճախ երեխաներից և անգրագետ ու անուս
մարդկանցից, որոնք ավելի աղքատ են բառերով»⁴:

Խոսելով այլ լեզուների ազդեցությամբ լեզվի փոփոխության մասին (և
նա համարելով կարևոր գործոն), հեղինակը առաջ է քաշում այն միտքը,
որ լեզուն գիտության, արվեստների, ընդհանրապես տեղիների համար
փոխանակ օտար բառեր ընդունելու՝ դրանց տալիս է համապատասխան
նշանակություններ՝ արտահայտելով «բնիկ» բառերով և «կամ այլ լեզու-
ների օրինակով նոր բառեր են կազմվում»⁵: Լեզվի զարգացումը այս ճանա-
պարհով Մ. Արեղյանը համարում է ոչ նոր երևույթ, որը երբեք չի դադա-
րել, և որ հատկապես XIX դարում առանձնապես շատ նոր բառեր են կերտ-
վել կամ հին բառերին նոր նշանակություններ են տրվել:

Անդրադառնալով նաև լեզուների փոխազդեցության դրական կողմերին,
նա իրավացիորեն գտնում է, որ հայերենը մեծ ազդեցություն է կրել թե՛
հնագույն շրջանում և թե՛ նոր ժամանակներում, որը և եղել է հօգուտ մեր
լեզվի զարգացման:

Ինչպես նկատելի է վերը շարադրվածից, ուղղակիորեն չգործածելով
այսօր արդեն հաստատուն բառապաշար մտած լեզվաբանական տերմին-
ները, Մանուկ Արեղյանը խոսում է և՛ նորաբանությունների, և՛ նոր իմաստ-
ների, և՛ բառապատճենումների ու փոխառությունների մասին:

Հր. Աճառյանը «Հայերենի արմատական բառարանում»⁶ արդեն ներկա-
յացնում է «նոր» արմատով բաղադրված «նորաբանություն» բառը՝ իբրև նոր
կազմված բարդություն: Հետագայում «Հայոց լեզվի պատմության» «Աշ-
խարհարար կամ նոր հայերեն» գլխում⁷ հեղինակը գործածում է նաև «նո-
րակերտ բառեր» տերմինը: Անդրադառնալով դրանց կարևորության հարցին
նա գրում է. «Լուրջ բառարանագետի պարտականությունն է հավաքել այս
բոլոր տեսակի նորակերտ բառերը, հիշել նրանց հեղինակը, գործածված
տեղն ու ժամանակը, մի խոսքով կազմել հայոց նորակերտ բառերի պատ-
մություն»: Խոսելով նաև օտար փոխառությունների և դրանց հայերեն հա-
մարժեքների մասին՝ նա գրում է. «Մեր գրողները բազմաթիվ ընտիր բառեր
կազմեցին գիտության բոլոր ճյուղերի համար, ճիշտ ու ճիշտ թարգմանելով
եվրոպական բառերը»⁸:

Ըստ այդմ Հր. Աճառյանը ներկայացնում է բառերի մի ամբողջ խումբ՝
նախապատմությունը տալով հայերեն կազմություններին, այսպես՝ ծանրա-
շափ, ուժաշափ, հնագրություն, հնէաբանություն, մենագրություն, հեռագիր,
հոգեբանություն, տիեզերագրություն, լուսատվություն, ջրածին, հյուսված-
քաբանություն: Ինչ խոսք, որ այս դեպքում նկատի է առնվում բառապատ-
ճենումը՝ իբրև դրական երևույթ: Հր. Աճառյանը դրանց զուգահեռ բերում է
նաև բառերի այնպիսի օրինակներ, որոնք արդեն ինչ-որ չափով շեղվում են
բուն բառից (փոխառությունից), ավելի հաջող ներկայացնելով տվյալ բառ-
իմաստը՝ հեռախոս, ռազմագիտություն, տետեսագիտություն, բուսաբանու-
թյուն և այլն: «Հայոց լեզվի պատմություն» գրքից մենք նաև տեղեկանում
ենք, որ Հր. Աճառյանը «Հայերենի արմատական բառարանում» հավաքել ու
ներկայացրել է ավելի քան 4050 նորակերտ բառեր:

Խորհրդային շրջանում կատարված բառապաշարի տեղաշարժերի, այդ
թվում՝ նորաբանությունների, նորագույն փոխառությունների, բառապատ-

⁴ Նույն տեղում, էջ 43—44:

⁵ Նույն տեղում, էջ 45:

⁶ Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 3, Երևան, 1977, էջ 466:

⁷ Տե՛ս Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. հ. 2, Երևան, 1955, էջ 485—493:

⁸ Տե՛ս Նույն տեղում, էջ 495:

ձեռնումների ու հապավումների մասին հանգամանալից խոսվում է Գուրգեն Սևակի մի շարք աշխատություններում⁹:

Էականը Գ. Սևակի լեզվաբանական հայացքներում նորաբանությունների, նոր բառերի մասին այն է, որ նա բառապաշարի խոշոր տեղաշարժերը կապում է հիմնականում հասարակության համար շրջադարձային հանդիսացող երևույթների և ժամանակների հետ: Սա անպայմանորեն առիթ է տալիս բառապաշարի մի մասի անկման ու մահացման և, մյուս կողմից՝ էլ ավելի շատ բառերի մուտք գործելուն: Թե՛ տեսական, թե՛ գործնական տեսակետից հեղինակը առավել կարևոր է համարում նոր բառերի քննությունը: Ըստ այդմ Գ. Սևակը տալիս է մի ընդհանուր սահմանում, համաձայն որի՝ նորաբանություններ են համարվում լեզվի զարգացման յուրաքանչյուր նոր փուլում բառապաշարի մեջ մտնող նոր բառերը: Հեղինակը նշում է նորաբանությունների ի հայտ գալու երկու ուղի՝ ինքնուրույն բառաստեղծության ճանապարհով և փոխառությունների միջոցով:

Այս երկուսն էլ արդյունք են դարձրել նաև ի հայտ եկած նոր երևույթներն ու իրերը անվանելուն: Գ. Սևակը հատկապես ուշադրություն է դարձնում խորհրդային շրջանում կատարվող այդ գործընթացին: «Բազմապարփակ կյանքը առաջադրում է նորանոր բառերի պահանջ, և դրա հետևանքով լեզուն հարստանում է հարյուրավոր ու հազարավոր նորաբանություններով»¹⁰:

Խոսելով նորագույն փոխառությունների և ընդհանրապես փոխառությունների մասին՝ Գ. Սևակը գտնում է, որ գիտատեխնիկական տերմինների փոխառության հետհոկտեմբերյան շրջանում սկսվում է յուրատեսակ մի պայթյուն «հայկական» և «միջազգային» ձևերի միջև: Եվ այս հարցին նա՝ լսելով ձևի ու բովանդակության տեսանկյունից, առաջնությունը տալով բովանդակությանը՝ Գ. Սևակը չի հանդուրժում իմաստի թեկուզ փոքր-ինչ աղճատում բառը թարգմանելիս: Ուստի նա միակողմանիորեն նախապատվությունը տալիս է այնպիսի բառերի գործածությանը, ինչպիսիք են «մատերիալիստ, բուլեիկ, ակադեմիա, ակադեմիկոս, կոմունիստ, պրոֆեսոր» փոխանակ «նյութապաշտ, իրապաշտ, մեծամասնական, մեմբրան, կանառական, համայնավաճախան, ուսուցչապետ»: Հեղինակը չի մոռանում նշել նաև որոշ հայկական տերմինների կողքին, դրանց զուգահեռ, «միջազգային» տերմինների համաժամանակյա գործածության մասին, ինչպես՝ կենսաբանություն-բիոլոգիա, հասարակական-սոցիալական, գաղափարախոսություն-իդեոլոգիա, տեսություն-թեորիա: Ինչ խոսք, որ այսօր հաղթող են դուրս եկել հայերեն ձևերը:

Գ. Սևակը հանգամանորեն քննարկում է նաև բայափոխառությունները: Օրինակ բերելով էվակուացնել, կոմբինացնել, մոբիլիզացնել, օկուպացնել բայերը մի կողմից, և մոտորացնել, նորմալացնել, նորմալորել բայերը մյուս կողմից, Գ. Սևակը վերջիններս համարում է խորհրդային հայկական բառակազմություններ նորմալ, նորմա և մոտոր փոխառյալ բառերից: Իսկ առաջինների մասին նշում է, որ դրանցով «նոր դուռ է բացվում մեր լեզվի բառակազմական և մասնավորապես բայափոխառության առաջ»¹¹: Այս երկուլթի դրական կողմը հեղինակը մեկնաբանում է հետևյալ կերպ. «...դա հնարավոր է դարձնում փոխառենել օտարազգի բայեր այն դեպքում, երբ նրանց արմատները հայերենում գործածական չեն կամ չեն էլ կարող լինել, որովհետև իբրև այդպիսիք նրանք գոյություն չունեն նաև ուրիշ լեզուներում»¹²: Գիտակցելով էվակու, օկուպ, մոբիլիզ, կոմբին մասերի իմաստը իբրև բառեր՝ կոմբինացիա, էվակուացիա, մոբիլիզացիա, հայոց լեզուն շատ

⁹ Տե՛ս Գ. Սևակ. Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը. Երևան, 1946 թ.: Ն ու յ ն ի՝ Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:

¹⁰ Գ. Սևակ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 142:

¹¹ Գ. Սևակ. Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը, էջ 18:

¹² Նույն տեղում, էջ 18:

արագ բառակազմեց՝ էվակուացնել, էվակուացված, էվակուացվել և այլն, նույն կերպ՝ կոուրդիեցնել, դիֆերենցացնել: Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն Գ. Սեակը ճիշտ բացատրելով երևույթը՝ ճիշտ չի անվանում այն, քանի որ փոխառնվում է ոչ թե բայը, այլ բայահիմքը:

Հապավումները համարելով «բարդության նորագույն եղանակ»¹³, Գ. Սեակը հանգամանորեն քննարկում է նաև այս հարցը՝ միաժամանակ տալով խորհրդային շրջանում տարածում գտած նորագույն հապավումների բավականին ստվար մի ցանկ:

Տարբեր ժամանակներում հրատարակված գիտական աշխատություններում¹⁴ նոր բառերի, նորաբանությունների վերաբերյալ եղած դիտողություններն ու մտքերը առավել ամբողջական ու ամփոփ ձևով իրենց արտացոլում են գտել էդվարդ Ադայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» գրքում: Այստեղ արդեն որոշակիորեն սահմանազատվում են նոր բառը և նորաբանությունը. «Ամեն մի նոր բառ, սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է դալիս որպես նորաբանություն: Լայն առումով նորաբանություն է կոչվում լեզվական ամեն մի նոր իրականություն կամ իրողություն: Նեղ առումով նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, դարձված, առանձնահատուկ արտահայտություն (իդիոմ), բառի նոր իմաստ, բառագործածության նոր իրողություն»¹⁵:

Ըստ բառապաշարի մեջ իրենց ունեցած դերի, հեղինակը նորաբանությունները բաժանում է երկու կարգի՝ ընդհանրացող և մեկուսացած:

Նա ընդհանրացող է համարում այն բոլոր նոր բառերը, որոնք կարճատև թե երկարատև ժամանակամիջոցում անընդհատ կրկնվող գործածությունների հետևանքով անցնում են բառապաշարի գործուն շերտին և հենց դրանով էլ դադարում են նորաբանություն լինելուց: Որպես այդպիսիք նա բերում է բազում օրինակներ՝ հեռուստացույց, լուսնաճալ, մոտաբերել, շրջատաշել, երեսպատել, ապահովագրություն, անվադող և այլն:

Մեկուսացած նորաբանություններ է համարում այն բոլոր բառերը, որոնք գործածվում են այս կամ այն գրվածքում, բայց կրկնվող գործածություններ չեն ունենում, հետևաբար և՛ չեն ընդհանրանում և չեն անցնում բառապաշարի գործուն շերտին»¹⁶: Որպես այդպիսիք է նա դիտում դիպվածական բառերը, բանաստեղծական նորակերտ բառերի որոշ մասը, հեղինակային նորակազմությունները, անհարկի փոխառությունները:

Մեծ ուշադրության են արժանի էդ. Ադայանի լեզվաբանական հայացքները նաև ժամանակակից հայերենի նորակազմ բառերի կերտման, բառապաշարի հարստացման ներքին և արտաքին միջոցների մասին: Դրանցից հիմնականները ներքին միջոցներն են, որոնք է՛լ ավելի են հարստացնում ժողովրդախոսակցական լեզվի ու գրաբարի բառակազմական կաղապարներն ու բաղադրական հիմքերը օգտագործելով: Հենց սա էլ հեղինակն համարում է մեր լեզվի բառապաշարի հարստացման մի անփոխարինելի ճանապարհը, որով ստեղծվել են բազմաթիվ հայերեն բառեր, ինչպես՝ առերեսել, աշխատատար, գրապահոց, բեմադրվեստ, ենթադատ, գաղաղվեստ, խաղավար, ծանրոգ, հանրախանութ, լուսնախցիկ, ձայնադառն, պանակակետ, ջրաղկել, ջրաշինարար, ֆաբրիկիչ, ֆնապարկ, օդանավ, օդաչու և այլն: Էդ. Ադայանը միանգամայն իրավացիորեն սրանք համարում է մեր լեզվի հարազատ բառակազմություններ, որոնք բառապաշար են մուտք գործել վերջին վաթսու տարիների ընթացքում:

Նույնով ժամանակակից հայերենի արտաքին փոխառությունների մա-

13 Տե՛ս Գ. Սեակ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 185:

14 Տե՛ս է. Բ. Ադայան. Լեզվաբանության ներածություն. Երևան, 1967: Գ. Բ. Ջահուկյան, է. Բ. Ադայան..., Հայոց լեզու, մաս I, Ա պրակ, Երևան, 1980:

15 Է. Բ. Ադայան. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984, էջ 169:

16 Նույն տեղում, էջ 170:

սին, հեղինակը նկատում է, որ հայերենում փոխառյալ բառերը ենթարկվում են հայոց լեզվին հատուկ հնչյունաբանական փոփոխությունների, հարմարեցվում հայերենի առանձնահատկություններին: Այլ կերպ ասած՝ հայացվում են: Փոխառությունները ամբողջապես ենթարկվում են հայերենի քերականական օրենքներին, գործող օրինաչափություններին: Փոխառյալ մակ-րո, ավտո, միլի, ռադիո բաղադրիչները դառնում են բազմաթիվ հայերեն նոր բառերի կերտման հիմք: Բառապաշարի հարստացման երկու՝ ներքին և արտաքին միջոցներից հիմնականը էդ. Աղայանը, ինչպես նշվեց, համարում է ներքին՝ որպես մշտապես գործուն: Բավականին հանգամանալից ու մանրամասնորեն էդ. Աղայանը քննում է նաև ժամանակակից հայերենի բառապաշարի կառուցվածքի գործման հիմնական ուղիները, ինչպես նաև բառապաշարի իմաստաբանական զարգացման հարցը:

Նորարարություն բառը իբրև լեզվաբանական հասկացություն և տերմին է ներկայացվում 1975 թ. հրատարակված «Լեզվաբանական բառարանում», որտեղ այդ տերմինը մեկնաբանվում է թե՛ լայն, թե՛ նեղ առումներով. «Նեղ առումով այս տերմինը գործածվում է լեզվի մեջ մտած և դեռևս ընդհանրացում չստացած նոր բառերը, դարձվածները, ոճերը, քերականական յուրահատկությունները, ինչպես նաև նոր իմաստավորում ստացած բառերը նշելու համար»:

Լայն առումով լեզվի զարգացման յուրաքանչյուր նոր փուլում այն բոլոր նոր բառերը, որոնք մուտք են գործում բառապաշարի մեջ¹⁷: Բառարանը, արձանագրելով այն ուղիները, որոնց շնորհիվ (բառակազմություն, բառապատճենում, փոխառություն) ստեղծվում ու լեզու են մուտք գործում նորարարությունները, թվարկում է նաև հայերենում արդեն իսկ գործածական դարձած, նորարարություն տերմինի համարժեք նշանակությամբ այլ տերմիններ ևս՝ «նորակազմ բառ», «նորակերտ բառ», «նորահնար բառ», «նորամուտ բառ», «նորաստեղծ բառ» և այլն:

Վերը շարադրված այս նույն տեսանկյունից է քննարկվում նորարարություն հասկացությունը Ս. Էլոյանի կողմից¹⁸, որը նոր բառը և նորարարությունը շահմանագատելով, դրանց առաջացման հիմնական աղբյուրը համարում է գիտատեխնիկական առաջընթացը:

Նորարարություն համարելով բոլոր «...այն բառերը, որոնք նոր են մտնում լեզվի մեջ», Սերգեյ Աբրահամյանը դրանց տարածումը բացատրում է հետևյալ հանգամանքներով՝ ա) հաղորդակցական արժեքով, բ) իմաստային և ձևային հատկանիշներով, գ) համապատասխան իմաստի համար մրցակից բառի առկայությամբ կամ բացակայությամբ¹⁹: Ըստ այդմ էլ արագորեն տարածվում են այն նորարարությունները, որոնք ունենում են ավելի հաճախակի գործածություն: Տարբերակելով տերմինային բառերը իբրև նորարարություններ, Ս. Աբրահամյանը ուշադրություն է դարձնում նաև հեղինակային նորակազմություններին:

Իր «Ժամանակակից հայոց լեզու» բուհական դասագրքում²⁰ Ա. Սուքիասյանը տարբերակում է բառային և իմաստային նորարարությունները: Նա բառային է համարում իրենց արտաքին՝ հնչյունական պատյանով և իմաստով բոլորովին նոր այն բառերը, որոնք առաջին անգամ են գործածվում լեզվում: Իմաստային է համարում լեզվում արդեն եղած բառերի ձևոք քերած նոր իմաստները: Նորարարությունների հոսքը լավագույնս ցույց տա-

17 Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարաբաղյան. Լեզվաբանական բառարան. Երևան, 1975:

18 Վ. Գ. Առաքելյան, Ա. Զ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան. Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979: Ս. Ա. Էլոյան. Ժամանակակից հայերենի քառային ոճաբանություն, Երևան, 1989:

19 Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան. Ժամանակակից գրական հայերեն. Երևան, 1981, էջ 119—121:

20 Տե՛ս Ա. Ս. Սուքիասյան. Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1982:

ու համար հեղինակը բերում է հայ բառարանագրության տվյալները, ըստ որոնց ականառու երևում են բառապաշարի տեղաշարժերը, էականը համառոտման լեզվի ներքին միջոցներով, բառակազմական գործող կաղապարներով նոր բառերի ստեղծումը, Ա. Սուբիասյանը ղրանց երևան գալու առաջնահերթ պատճառը համարում է լեզվի զարգացման ու կենսագործունեության թելադրանքը, բառապաշարի լրացման պահանջը:

Անդրադառնալով հեղինակային նորակազմություններին՝ Ա. Սուբիասյանը առանձնացնում է նաև այսպես կոչված «ոճական» նորաբանություններ, դրանք համարելով «սեփական» կամ թարգմանական գեղարվեստական գրականության մեջ կազմվող հայերեն այն բառերը, որոնք վերաբերում են տրվյալ ժողովրդի պատմությանը, մշակույթին, կենցաղին, արտագրությանը և այլն²¹: Հեղինակը նորաբանությունը իրավացիորեն համարում է պատմական հասկացություն. այն, ինչ լեզվի զարգացման տվյալ փուլում նորաբանություն է, պատմական այլ շրջանում այլևս որպես այդպիսին չի գիտակցվում:

Մեր կողմից ուսումնասիրվող հարցի վերաբերյալ ծավալուն աշխատություն է բառարանավելի Հ. Ա. Օհանյանի կողմից²², որի գրքում արդեն տրվում է բառային կազմի տարբերակումը մի քանի հատկանիշներով: Քննվում են բառապաշարի հարստացման ներքին և արտաքին միջոցները, մեծ ուշադրություն է դարձվում խորհրդային շրջանում բառային կազմի մեջ տեղի ունեցած փոփոխություններին ու տեղաշարժերին:

Հ. Ա. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» արդեն, բավականին ընդարձակ բառահոգովածի ներքո տրվում է նորաբանություն տերմինի լեզվաբանական, դիտական ըմբռնումը: Ըստ այդմ նորաբանություններ են «այն բառերը, արտահայտությունները, դարձվածքները, որոնք ստեղծվում են կամ փոխառվում են նոր առարկաներ, երևույթներ (հասկացություններ) արտահայտելու համար և որոնց նորաստեղծ (նորամուտ) լինելը գիտակցվում է խոսողի կողմից»²³: Բառարանագիրը ևս տարբերակում է բառային և իմաստային նորաբանություններ, բնութագրելով դրանք առանձին-առանձին: Այստեղ միանգամայն իրավացիորեն ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ «20—30-ական թթ-ին նորաբանություն հանդիսացած բազմաթիվ բառեր այժմ արդեն լայն գործածություն ստացած, լեզվի բառապաշարում մերված միավորներ են»²⁴:

Վերը շարադրված լեզվաբանական-տեսական ըմբռնումները նորաբանությունների, նոր բառերի վերաբերյալ կարելի է արտահայտել հետևյալ գծապատկերի միջոցով (նկ. 1):

Այսօրվա լեզվական կտրվածքով այս գծապատկերները ունեն հակասություններ: Այսպես՝ ամենակարևորը, որ այսօր չի կարելի նոր բառ և նորաբանությունը նույնացնել: Դրանք լեզվաբանական առանձին միավորներ են:

Նոր իմաստը երբեք չի բխում նորաբանությունից կամ այն չի կարելի քննել միևնույն լույսի տակ, քանի որ նոր իմաստը լեզվում արդեն վաղուց գործող բառի նոր իմաստով գործածությունն է:

Մեր կարծիքով ժամանակակից հայերենում առաջացել են լեզվաբանական երկու նոր հասկացություններ: Դրանք են նոր բառը և նորաբանությունը, որոնք երբեք չպետք է շփոթել միմյանց հետ, և որոնք հստակորեն պետք է տարբերակվեն: Այս տարբերակումը որոշ չափով, ինչպես նկատեցինք, առկա էր էդ. Աղայանի լեզվաբանական տեսակետներում:

Նոր բառեր պետք է համարել ժամանակակից հայերենի բոլոր այն բա-

²¹ Նույն տեղում, էջ 205—206:


²² Տե՛ս Հ. Ա. Օհանյան. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները. Երևան, 1982:

²³ Հ. Ա. Պետրոսյան. Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:

²⁴ Նույն տեղում, էջ 485:

ուերը, որոնք լեզվի տվյալ փուլում հանդես գալով իբրև նորաբանություն, հետզհետե (շատ արագ կամ դանդաղ) ընդարձակում են իրենց գործածության և կիրառության շրջանակները, բառապաշարի պասիվ շերտից անցնում ակտիվ շերտին՝ դառնալով համագործածական: Ուրեմն այդ նորաբանությունները այլև որպես այդպիսին չեն գիտակցվում:

Նորաբանություն պետք է համարել ժամանակակից հայերենի այն բառերը, որոնք նոր առաջանալով, մնում են նեղ մասնագիտական գործածության շրջանակներում, չեն անցնում գործուն բառապաշար:



Նկ. 1

Նորաբանության՝ նոր բառ դառնալու կամ նորի վերածվելու առաջին անհրաժեշտ պայմանը գործածության հանախականությունն է: Այսինքն, որքան հաճախ գործածվի տվյալ նորաբանությունը, որքան մեծ կարիք ու պահանջ լինի տվյալ բառի ամենօրյա գործածության, այնքան կմեծանա այդ նորաբանության նոր բառ դառնալու հավանականությունը:

Այսպես՝ տիեզերանավ, լուսնանավ, հեռուստածրագիր, հեռուստադիտող, հրթիռաշինություն, միջուկագերծ և այլ նման կարգի նորաբանությունները այսօր արդեն գործուն բառապաշարի լիարժեք անդամներ են, սոսկ նոր բառեր, և սխալ կլինի նման բառերը դիտել իբրև նորաբանություններ:



Մինչդեռ հենց նույն տիեզերք, հեռուստ, իրթիռ բաղադրիչներով կազմված տասնյակ բառեր, ունենալով ստեղծման գրեթե միևնույն ժամանակը, մնում են իբրև նորաբանություններ, ինչպես՝ հեռուստակառավարում, հեռուստալուսաչափ, տիեզերափոշի, հեռուստաճադրողիչ, հրթիռացի, հրթիռադաշտ և այլն:

Ինչպես տեսնում ենք, որոշակի կոնկրետ ժամանակի մեջ տեղավորել նոր բառի գործածության սահմանները՝ հնարավոր չէ, նույն կերպ և նորաբանության: Ինչու՞ Այն պարզ պատճառով, որ առօրյա կյանքում ստեղծված որևէ նորաբանություն կարող է շատ արագ դառնալ համագործածական և ընդհակառակը՝ բոլորովին չանցնել ակտիվ շերտ, բավական երկար ժամա-

նակ, նույնիսկ լեզվի ամբողջ փուլի համար դիտվել իբրև նորարանություն: Նորարանություն կարելի է համարել նաև այն հեղինակային նորակազմութունները, որոնք անկախ իրենց հաջողված լինելուց, չեն անցնում բառապաշարի ակտիվ շերտ: Ե. Չարենցի, Հ. Շիրազի, Պ. Սևակի ստեղծած տասնյակ նորարանություններ չեն դարձել համագործածական, բայց չեն էլ հնացել:

Ուստի, եթե խոսելու լինենք ժամանակի մասին, ապա միմիայն պետք է նկատի ունենանք ժամանակը շատ քնդհանուր ձևով: Կամ՝ ողջ նոր գրական հայերենի շրջանը (լայն առումով) և կամ՝ XX դարի սկիզբը՝ իբրև հասարակական-տնտեսական կյանքի մի ակտիվ ժամանակաշրջան (նեղ առումով):

Տեսական այս դրույթներից ելնելով փորձենք կազմել մի նոր գծապատկեր: Այն կունենա հետևյալ տեսքը.



Մեղ թվում է. որ երկրորդ գծապատկերում առավել ամբողջությամբ ու ներգաշնակ երևում է պասիվ բառապաշարի մի ամբողջ հատվածի՝ նորարարանությունների առաջացման, դարգացման ու փոփոխման գործընթացը:

Գծապատկերը կսեկնարանվի հեակյալ կերպ. պասիվ բառապաշար մոտք գործած նորարարությունների մի մասը դառնում է համագործակա-կան, անցնում բառապաշարի գործուն շերտ և փոխակցվում նոր՝ դարարելով նորարարություն լինելուց: Մյուս մասը՝ չունենալով հաճախակի գործածու-թյուն, չտարածվելով շարունակում է գիտակցվել իբրև նորարարություն: Դրանք հիմնականում նեղ մասնագիտական, գիտական տերմիններն են:

Այսօրվա լեզվական կտրվածքով այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ալի-բաուաբ, ամսյաթածկույթ, ամպապա, աշխատավարձ, աշխատանքագույն, աշխատապարգև, աստղաբանություն, աստղափյուռ, աստղաշատ, առևապսակ, առևարմուծություն, առևսմիգություն, առևնառու, առևածով, առևմշուշ, անտառաբույր, բյուրալիք, բյուրաբեգակ, գեղականույց, գեղակերտ, գեղա-ծավալ, գիտամատչելի, գիտափորձ, գիտանախաճախելի, լեռնագոյացում, լեռնադանուկ, լեռնագրություն, լուսագովադդ, լուսագագիք, լուսագդա-նշան, ծաղկավիժուկ, կաթնագոյացում, կենսաբջիշ, կենսածիլ, կենսանորմ, ծանրանաբալ, կանխադրույթ, կաղամբաթթու, կաղամբացեց, կիսանշա-ռություն, հրթիռադաշտ, հրթիռատար, հեռուստացուցադրում, հեռուստա-խցիկ, հեռանայաց, ձայնադաշտ, ձայնաօսալ, ձայնասփսել, ձայնընդու-նիշ, հեռակածոց, հառազալարեկում, հասագայթալույս, մտապատկերել, մետաղափող, մաքաղանիլ, մաքաղատ, մաքաղկյանք, շափափոն, շա-փակալիկ, շերմաթափանցում, ջերմաստիճան, ռազմածառավ, սիրակա-ռույց, սևագիշեր, սառցալեզվակ, օդանավակայան, օդամաքիշ և այլն չի կարելի համարել նորարարություններ: Սրանք արգեն մոտք են գործել ակ-տիվ բառապաշար, գործածվում են ամենատարբեր ոճերում՝ դառնալով գոր-ծուն բառապաշարի միավորներ՝ նոր բառեր:

Նոր բառ են դառնում նաև հեղինակային նորակազմությունների մի մասը, այն մասը, որը ընդունվում է հասարակության կողմից և ծավալվում է: Այսպես՝ անձրևածած, բյուրանուն, ծեղրածույլ, ծեղրանիստ, տագնապոտ, անշահադետ, սիրալույ, ուրագել, կացինել, շուշանաբույր, մշաղալլալ, մշտակաթեղ, մշտաբալի և այլ հեղինակային նորակազմությունները այսօր արգեն դարձել են գործուն բառապաշարի միավորներ և ունեն հաճախակի գործածություն:

ПОНЯТИЕ О НЕОЛОГИЗМАХ, НОВЫХ СЛОВАХ И НОВЫХ ЗНАЧЕНИЯХ В АРМЯНСКОЙ ЛИНГВИСТИКЕ

П. Г. МЕИТИХАНЫ

Резюме

В статье представлена история лингвистических учений о неологизмах, новых словах и новых значениях. Исследование вопроса с синхронической точки зрения показывает, что сегодня термины «неологизм» и «новое слово» — разные лингвистические понятия, которые должны быть дифференцированы и исследованы как разные язы-ковые единицы.